




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Unsubscribed G.
Young people
unpublished

891.99

U-55

275

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

ԳԵՎՈՐԳ ԽՆԱՆՅԱՆ

ԿԱՊԻՏԱԼԻ ՍՏՐՈՒԿՆԵՐ

ԴՐԱՄԱ 3 ԳՈՐԾ.

891.99
Q-55

ԹԻՖԼԻՍ
1926

20 JAN 2006

19 NOV 2010

Պրոբատարներ բոլոր յերկրներին, միացեք!

3891.992
Ա-55

Գ. ԱՆԱՆԵԱՆ

այս.

ԿԱՊԻՏԱԼԻ

ՍՏՐՈՒԿՆԵՐ

ԴՐԱՄԱ 3 ԳՈՐԾ.



ԹԻՖԼԻՍ — 1926

1.02.2013

19523

BOOK HALD S

BOOK VON R 3

Պ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Զ Ի Ն Բ

Արամ, բանվոր } ամուսիններ:
 Մարիամ, }
 Հեղինե, գիմնազիոնի աշակերտուհի } նրանց զավակ-
 Աշխեն, բանվորուհի } ները:
 Արտավազը, նրանց տանը ապրող բանվոր:
 Նունե, գիմնազիոնի աշակերտուհի, բանվորի աղջիկ:
 Աննա, գիմնազիոնի աշակերտուհի } գործարանատի-
 Աշոտ, ուսանող... } րոջ զավակներ:
 Բանվորներ, որիորդներ, տիկիներ:

Главлит № 450.

Тифлис.

Тираж 1500.

Թրֆլիս Ժ.Տ.Դ.Խ. Պոլիգ.-տրեստի 4-րդ ապ. Պուշկ. փ. 3.

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՎԱԾ

Աղբատ կահավորությամբ սենյակ, դիմացը, պատից կախած են աշակերտական սև գոգնոց, յերկու բաձկոն ու պատի ժամացույց, աջ կողմը դրած է թախտ: Ձախ պատի մոտ, առաջակողմը, Հեղինեի փոքրիկ սեղանի վրա դրած են զրքեր, տետրակներ, վոսկեզոծ արժոմ, սպիտակ ծաղիկներով լիքը մեծ կոդով և թարմ ծաղիկների փունջ:

Մեջ տեղը մեծ սեղան. մի անկյունի մոտ նստած է Հեղինեն, գիմնադիրն է հագուստով, առաջը թափված են զրքեր, տետրակներ, զբաղված է դասերով, իսկ մյուս անկյունի մոտ նստած է Մարիամը, կարում է սպիտակեղեն. ձախ անկյունի խորքում վարպետի հետև քնած է բանվորուհի Աշխենը: Պատուհաններից իջեցրած են սպիտակ վարպետներ, առավոտյան ժամը 6-ն է, սեղանի վրա դրած է վառած լամպ:

ՄԱՐԻԱՄ. Մատներս իմա չեն, մեջքս յերկու տակ է յեղել, սպիտակ կտորին նայելուց աչքիս լույսը կորչում է, գիշեր ցերեկ կարում եմ, 15 կոպեկ հազիվ են տալիս... Իսկ դու ինչ վոր արժմներ ես ստանում...

ՀԵՂԻՆԵ. Միթե Աշոտը մեղավոր է...

ՄԱՐԻԱՄ. Նրա նվերը չի կարող մեզ համար զարդարանք դառնալ...

ՀԵՂԻՆԵ. Միանգամայն տարորինակ ես խոսում...

ՄԱՐԻԱՄ. Նրանք մեզ համարում են անասուն...

Մի մոռանա վոր անասունների հետ հաշիվը ուրիշ տեսակ են տեսնում...

ՀԵՂԻՆՆԵ. Աշոտը շարունակ լինում է մեր մեջ, հետաքրքրվում է մեր կյանքով, ահա թոքախտավորներին համար վորոշել է սանատորիա հիմնել, կազմակերպում է սպիտակ ծաղկի տոն, սպիտակ ծաղկի տոնի առթիվ նրա տան դռները շարունակ բաց են բոլոր բանվորների համար, ամեն րոպե մտնում, դուրս են գալի...

ՄԱՐԻԱՄ. Այդ բոլորը գիտեմ, գիտեմ Հեղինե...

Յես քեզ ասում եմ...

ՀԵՂԻՆՆԵ. Մայրիկ, այդպես մի խոսի...

ՄԱՐԻԱՄ. Մեզ մոտ թշվառություն, չբավորություն, այնտեղ հարստություն, շոտյություն... Ինչ մի խեղճ բանվորի աղջիկ, նա հարուստ գործարանատեր... Նրա աշատեղ գալը, նրա թանկագին նվերը... Նա այստեղ վոչինչ չունի. գուցե և մեր խեղճուկ սենյակը նրա մեջ միայն զգվանք և առաջացնում...

ՀԵՂԻՆՆԵ. Մայրիկ...

ՄԱՐԻԱՄ. Միթե մոռացել ես այն որը, յերբ գործարանի կաթսան պայթեց: Ամբողջ բանվորական թաղը, մեծից մինչև փոքր աղի արցունք եր թափում... Դիակները մեկը մյուսի հետևից... Անվերջ դիակներ...

ՀԵՂԻՆՆԵ. Բանվորների կյանքը միշտ էլ կապված է վտանգի հետ...

ՄԱՐԻԱՄ. Այն ճիշն ու աղաղակը դեռ հնչում է ականջումս... Վոչ, վոչ, նրանք ուրիշ են, մենք ուրիշ. և այդ թանկագին նվերը վոչ թե զարդարանք կարող է լինել, այլ ծաղր...

ՀԵՂԻՆՆԵ. Աշոտի հայրը վորպես գործարանատեր կարող եր արդյոք անակնկալ աղետի առաջն առնել...

ՄԱՐԻԱՄ. Այդ նույն ժամին գուցե նրանք զվարճանում էին, ծիծաղում էին... և գուցե շատ շա-

տերը յերկրորդ որն անցան մեր կողմը միայն նրա համար, վոր տեսնեն թե ով կա այնպիսի մեկը, վոր իր մարմնով զվարճություն պատճառե նրանց...

ՀԵՂԻՆՆԵ. Մայրիկ, դու մեղանչում ես...

ՄԱՐԻԱՄ. Լսի՛ր Հեղինե, հայրս տգետ բանվորներից չեմ, նա սովորել եր իրանց գյուղի ուսումնարանում, հասկանում եր ուսման և դաստիարակության արժեքը. ինձ համար՝ իր միակ զավակի համար՝ վոչ մի բան չեմ խնայում. ինձ ուղարկեց գիմնադիոն, յես մեծ հաջողությամբ ավարտեցի, դարձա վարժուհի... Հայրս յերջանիկ եր և բախտավոր... Իր աղջիկը վարժուհի եր... Այն ժամանակ յես ել քեզ նման գեղեցիկ էի, գրավիչ, ունեի շատ հարուստ համակրողներ (պառազ...)... Սակայն յես գերադասեցի մեր հարեան բանվոր Արամին... Միայն նրա մեջ տեսա անկեղծ սեր...

ՀԵՂԻՆՆԵ. Այդպես...

ՄԱՐԻԱՄ. Յեվ այն ժամանակ համոզվեցի, վոր մենք ուրիշ ենք, իսկ նրանք ուրիշ...

ՀԵՂԻՆՆԵ. Ուրեմն յես պետք է փախչեմ, խուսափեմ այն բոլոր մարդկանցից, վորոնք մեզանից չեն...

ՄԱՐԻԱՄ. Կտրում ենք մեր բերանից կոպեկներ, տալիս ենք քեզ, վոր դու ուսումը ավարտես, վոր այս խավար և մոռյալ անկյունը լույսի ճառագայթ մտնի... Հանկարծ դու...

ՀԵՂԻՆՆԵ. Մայրիկ գուր ես այդպես խոսում...

ՄԱՐԻԱՄ. Դու շնորհիվ գիմնադիոնի գտել ես ընկերուհիներ, հարուստ շրջան, հաճախ լինում ես նրանց մոտ, նրանց պալատներում... Իսկ մեզ մոտ, այս խոնավ սենյակը, այս կեղտոտ, մրոտ պատերը, այս ցնցոտիները վորի մեջ քնում են հարազատ հայրդ և

քույրդ... վախենում եմ, չը լինի թե դու մեզ դավաճանես... Մոռանա...

Հեղինե. Յես այս տարի ավարտում եմ գիմնազիոնը, կը գնամ, կը սովորեմ բժշկություն...
ՄԱՐԻԱՄ. (Մտազբաղ, դնոն հեզնամնրոյ). Իսկ Աշոտը սովորում ե ինժինեըությոն...
Հեղինե. Մայրիկ, ինչո՞ւ ես նրան արհամարհանքով հիշում, ինչո՞ւ ես այդպես խոսում...
ՄԱՐԻԱՄ. Քո և Աշոտի մեջ վոչ մի ընդհանուր բան չկա... Այո, ճիշտ ե դու գեղեցիկ ես, բայց մի մոռանա, վոր մի ուրիշը կարող ե ավելի գեղեցիկ չինել, և այն ժամանակ դու... Յես, յես վախենում եմ... Ո՛հ, շատ անգամ, հուսահատության և ծանր րոպեներին վոգեւորվել և մտածել եմ, վոր Արտավազդը, թեև Արտավազդը իմ հարազատ զավակը չե՞, բայց նրան յես եմ մեծացրել... Հենց այն ուրիշ յերբ նրան գտա փողոցում, փալանների մեջ փաթաթած, հայեցի նրա աչքերին և վորոշեցի վերցնել, մեծացնել, տալ նրա ձեռքը գիտության ջահ, վոր նա գիտության ջահով լուսավորե բանվորության ուղին և նույն ջահով կրակ տա, վառի այն պալատները, վորտեղ կա միայն գեխություն, ալյասեռում... Այժմ տեսնում եմ Արտավազդի գործը և համոզվում եմ, վոր յես չեմ սխալվել, իսկ դու...
Հեղինե. Այժմ գիմնազիոն գնալու ժամանակ ե, լուսանում ե... Ամբողջ ուրը մասնավոր դասերով այս կողմ, այն կողմն եմ վազում, տարին վերջանում ե... Կես գիշերին վեր կացա, վոր պատրաստվեմ, իսկ դու... Մայրիկ դուր ես քո մտածածնեքները...
ՄԱՐԻԱՄ. (Մտազբաղ). Յերանի թե ամեն ինչ

լինի այդպես, ինչպես դու ես ասում... Բայց...

Հեղինե. (Հուզված). Մայրիկ ինչո՞ւ ես ինձ տանջում...

ՄԱՐԻԱՄ. Վերջին ժամանակներս դու սաստիկ փոխվել ես, գունատվել ես, նիհարել... Չե՞ վոր յես քո մայրն եմ, չե՞ վոր քո յուրաքանչյուր շարժումը, քո յուրաքանչյուր հայացքը ճանաչում եմ յես... (Վեր ե կենում, հավաքում ե սպիտակեղենը):

(Հեղինեն սաստիկ ընկճված՝ հայացքը ուղղում ե մի կողմ):

ՄԱՐԻԱՄ. (Պնքն իրան). Յեթե ամեն ինչ միմիայն կասկած լիներ...

(Ժամացույցը խփում ե 7 անգամ):

ՄԱՐԻԱՄ. Գնամ, կրակ անեմ, ինքնաեռ գցեմ, ժամը 7-ն ե, հայրդ և Արտավազդը վորտեղ վոր ե կը գան... (գնում ե):

Պ Ա Ռ Ի Զ Ա

Հեղինե. (Հուզված յեվ հուսահատ վեր ե կենում)... Յեթե իրոք մայրիկի ասածները ճիշտ դուրս գան, և յեթե իսկապես Աշոտը... Այն ժամանակ յես, յես կորած եմ... Վոչ, վոչ, այդ անկարելի ե... (Լավում ե գործարանի առաջին սուրոցը, նայում ե չորս կողմը, սթափվում ե):

Հեղինե. (Վարագույրի ծայրը փոքր ինչ քարծորացնում ե). Ա՛շխեն, Ա՛շխեն, առաջին սուրոցը յեղավ, Ա՛շխեն, Աշխեն վեր կաց... (Աշխենը զարթնում ե). Ժամանակ ե գործարան գնալու. դու այնպես խորն ես քնում, վոր գործարանի սուրոցը չի զարթեցնում քեզ...

ԱՇԽԵՆ. Այնպես եի հոգնած...

ՀԵՂԻՆԵ. Սակայն ի՞նչ է ձեր ստացածը... Յերեակայում եմ ինչ կը լինեիր մեր դրությունը, յիթե Արտավազդը մեզ ոգնելիս չը լինեիր... (վերցնում և գոգնոցը յիվ կապում):

ԱՇԽԵՆ. (Դուրս և գալի վարագույրի հետևով)։ Զուր չե, վոր մայրիկը շարունակ գանգատվում ե... Մենք ամբողջապես պատկանում ենք ուրիշներին և այդ ուրիշները... (սկսում և սեղսնը մարքել)։

ՀԵՂԻՆԵ. Միթե նրանք ել մեզ նման մարդիկ չեն...

ԱՇԽԵՆ. (Պահարանից նսնում և պնակներ, բաժակներ)։ Վոչ, վոչ, Հեղինե, դու նրանց չես ճանաչում, յերբ ճանաչես, այն ժամանակ կը լցվես վրեժ-խնդրությամբ ճիշտ այնպես, ինչպես յես...

ՀԵՂԻՆԵ. Դու Արտավազդի ազդեցության տակն ես, նա և այդպես բեզ տրամադրում...

ԱՇԽԵՆ. Վոչ Հեղինե, նրանց լրբությանը չափ ու սահման չկա... Յիթե կարողանայի յես իմ ձեռքերովս խեղդամահ կանեի նրանց...

ՀԵՂԻՆԵ. Իսկ Աշոտը...

ԱՇԽԵՆ. Աշոտը... (պնակները ձեռքից ընկնում, փշրվում են, հողմում հավաքում և կտորները)։

ՀԵՂԻՆԵ. Դու նրան չես ճանաչում...

ԱՇԽԵՆ. Հեղինե ձեռք քաշիր նրանից...

ՀԵՂԻՆԵ. Աշխեն...

ԱՇԽԵՆ. Յես քեզանից 3 տարով մեծ եմ, յես նրան լավ եմ ճանաչում... Զե վոր նա... (կանգ և առնում, ուզում և ըսն ասել, բայց վոչինչ չի ասում)։ Ճիշտ է, դու քո ուսումովը նրանից պակաս չես, բայց նա...

ՀԵՂԻՆԵ. Աշխեն, նա ինձ սիրում ե...

ԱՇԽԵՆ. (Հուզված)։ Վոչ, վոչ, Հեղինե... Նա քեզ խաբում ե... Նա քեզ չի կարող սիրել... Նրան զրավում և միայն քո գեղեցկությունը...

ՀԵՂԻՆԵ. Աշխեն, դու ինձ...

ԱՇԽԵՆ. Անցյալ որը յերբ մայրիկը խոսում եր Արտավազդի հետ Աշոտի նվերի մասին, նա նայեց քո սեղանին, նայեց թանկագին նվերին, նայեց սպիտակ ծաղիկներին և զիտես, ինչ ասաց... Մեզ հանգիստ թողնեն, հարկավոր չեն նրանց սպիտակ ծաղիկները, թույն և մահ և պարունակվում նրանց մեջ, ասում ե...

ՀԵՂԻՆԵ. Ուրեմն Արտավազդը...

ԱՇԽԵՆ. Լսիր Հեղինե, ձեռք քաշիր Աշոտից...

ՀԵՂԻՆԵ. Արտավազդն և այդպես ասում...

ԱՇԽԵՆ. Վոչ, յես եմ ասում. Արտավազդը վոչինչ չը գիտե... Արտավազդը նրան չի ճանաչում...

ՀԵՂԻՆԵ. Յես, յես արդեն...

ԱՇԽԵՆ. Արտավազդը բանվոր է, Աշոտի նման ուսում չունի, բայց նա նման չե այն սրիկաներին, վորոնք գիտեն ոգավել անփորձ ու միամիտ...

ՀԵՂԻՆԵ. Աշխեն, ուզում եմ իմանալ...

ԱՇԽԵՆ. (Սարսափում և)։ Իմանա՛լ... Վոչ, վոչ Հեղինե... Ավելի լավ է չիմանաս...

ՀԵՂԻՆԵ. Ասա, ասա...

ԱՇԽԵՆ. Վոչ, Հեղինե, յես քեզ վոչինչ չեմ ասի...

ՀԵՂԻՆԵ. Դու պետք է ասես ամեն ինչ...

ԱՇԽԵՆ. Վոչ, (հուսահատ յիվ ընկնված)։ Վոչ, Հեղինե...

ՀԵՂԻՆԵ. Ասա, առանց քաշվելու, ասա դու Արտավազդին սիրում ես...

ԱՇԽԵՆ. (Շփովժվում ե). Արտավազդին (ուշա-
խացած). յես, յես սիրում եմ նրան...

ՀԵՂԻՆԵ. Ապա չե՛ր ուզում ասել...

ԱՇԽԵՆ. Ձեի ուզում ասել... Այո, այո... (սխառ-
զա) Յեթե Արտավազդի տեղը մի ուրիշը լիներ, գուցե...

ՀԵՂԻՆԵ. Այժմ հասկանում եմ... (անցնում ե փոք-
րիկ սեղանի կողմը, գրքերը կարգի ե բերում):

ԱՇԽԵՆ. (Պնակները յեվ բաժակները մաքրում
ե). Յեթե ես ժամանակ ունենայի այս գիտակցութեա-
նը... Յերեք տարի առաջ... Յերեք տարի առաջ յես
անփորձ եի... Յես վոչինչ չեի հասկանում... և նա...
(լաց ե լինում):

ՀԵՂԻՆԵ. (Դառնում ե). Դու լաց ես լինում...

ԱՇԽԵՆ. Վոչ, վոչ Հեղինե... Յես չեմ ուզում լաց
լինել, սակայն արցունքներս թափվում եմ... Յերբ յես
հիշում եմ...

ՀԵՂԻՆԵ. (Բռնում ե Աշխենի ձեռքերը). Աշխեն...

ԱՇԽԵՆ. Հեղինե, յես Արտավազդին սիրում եմ,
հասկանում ես, սիրում եմ. զգացմունքս խեղդում եմ
մեջս, յես ցույց չեմ տալի, գիշերներ, անքուն գիշեր-
ներ եմ անցկացնում, վորովհետե ուրիշ յեղք չկա, յես
չը գիտեմ ի՞նչ կարող ե պատահել և ինչով կը վերջա-
նա, սակայն յես նախազգում եմ, վոր պետք ե վերջ
տալ այս տանջանքին, նա վոչինչ չը գիտե, յեթե նա
իմանա Հեղինե, վոր յես նրան պաշտում եմ... և յես...
(զլուխը դնում ե Հեղինեի կրծքին, լաց ե լինում):

ՀԵՂԻՆԵ. Հանգստացիր, պետք ե համբերել... Ա-
վարտում եմ գիմնագիտներ, կոգնեմ ձեզ, մենք կապրենք
նոր կյանքով... Յես կազատեմ ձեզ այս զրությունից,

մեզ սպասում եմ լավ որեր, յես այժմ հավատացած եմ
ավելի քան յերբեկցե...

ԱՇԽԵՆ. Սակայն...

ՀԵՂԻՆԵ. Շուտով յես կը ստանամ վկայական...

Մեր ուրախությունը թող սկսվի միասին...

ԱՇԽԵՆ. Հեղինե, միթե մենք կարող եմք բաղդա-
վոր լինել...

(Դիմացից մանում եմ Արամը յեվ Արտավազդը,
հանում եմ կեղտոտ քանկոնները ու հազնում մա-
քուրները):

ԱՐԱՄ. Մեջքս ծալվում ե, վորքան դժվար ե աշ-
խատել գիշերները...

(Հեղինեն հավաքում ե գրքերը, Աշխենը կարգի
ե բերում սեղանը):

ԱՐՏԱՎԱԶԴ. Ուրիշ յեղք չը կա...

ԱՐԱՄ. Յեվ պետք ե շարունակվի այսպես ան-
վերջ... (քննական հայացք ե ծգում չորս կողմ, դառ-
նում ե Հեղինեին) Հավաքում ես գրքերդ, գնում ես
ուսումնաքան... Գնա Հեղինե, գնա սովորիր, գուցե
քեզ համար ստեղծես կյանքի լավ պայմաններ... (մոտե-
նում ե լվացարանին, սկսում ե լվացվել). Մարդիկ
վոսկու և արծաթի համար չեն ստեղծված՝ միմիայն ու-
սումը և աշխատանքն և վոր կարող ե յերջանիկ կյանք
ստեղծել... Գնա Հեղինե, սովորիր...

ՀԵՂԻՆԵ. Հայրիկ չը պետք ե հուսահատվել...

ԱՐԱՄ. Մենք հույսի նշույլ անգամ չունենք, մեր
կյանքը պետք ե այսպես շարունակվի անվերջ և այս-
պես ել մեռնենք... Մենք ծերուկներս անընդունակ եմք
կովի (հեռանում ե լվացարանից, վերցնում ե յերես-

սրբիչը) ահա (ցույց ե տալի Արտավազդին) սրանք պետք ե կովեն...

ԱՐՏԱՎԱԶԴ. (Սկսում ե լվացվել). Գիտակից բանվորների թիվը մատնեցով կարելի ե համարել... Սակայն մենք գործը սկսել ենք արդեն...

ՀԵՂԻՆԵ. Հայրիկ, միթե յես կարող եմ մոռանալ մեր այս ծանր օրերը...

ԱՐԱՄ. (Իտալում ե յերեսրբիչը ծեռքին). Լսիր Հեղինե, դու աշխատասեր, խելոք աղջիկ ես... Դու ինձանից օրինակ չը վերցնես... Այո, չը պետք ե միայն մեռնել գիտնալ, այլև պետք ե գիտենալ կովել, կռվել...

ՀԵՂԻՆԵ. Հայրիկ, յես միշտ կը լինեմ ձեզ հետ...

ԱՇԽԵՆ. Մեզ հեռ... Յես, Արտավազդը... Լավ գիտես մենք ինչով ենք զբաղված... Ամեն բոպե մեզ սպասում ե քստոր...

ԱՐՏԱՎԱԶԴ. Աշխենը ճիշտ ե ասում, մեզ սպասում ե վոչ միայն քստոր այլ ե կախաղան...

ԱՐԱՄ. Արտավազդ, բարձրացրու վարագույրները, մենք կարոտ ենք ճառագայթների, լույսի... (անցնում ե վարագույրի հետևով). յես փոքր ինչ պառկեմ հանգստանամ...

(Արտավազդը քարծուցեղում ե պատուհանների վարագույրները, Հեղինեն լսմպը հանգցնում ե, Աշխենը զբաղված ե սեղանով. Մարիամը ներս ե քերում ինքնատեղ, դնում ե սեղանի վրա):

ԱՇԽԵՆ. Մայրիկ հացը քիչ ե...

ՄԱՐԻԱՄ. Այս բոպեիս... (դուրս ե գնում):

(Արտավազդը կանգնած ե պատուհանի մոտ,

դրսից լսվում ե Նունեի ծայնը, վոր կանչում ե «Հեղինե, Հեղինե»):

ՀԵՂԻՆԵ. Գալիս եմ, գալիս եմ. մի բաժակ թեյ խմեմ, յես արդեն պատրաստ եմ, (շտապ շտապ թեյն ածում ե պնակում, փչում ու խմում):

ՆՈՒՆԵ. (Մտնուս ե գ քերթ թեզի տակին). Ժամը 7¹/₂-ն ե, ուշանում ենք (մտռնում ե Հեղինեի սեղանին, դիտում ե սպիտակ ծաղիկները). Դու արդեն համարյա թե վերջացրել, պատրաստել ես սպիտակ ծաղիկներդ, իսկ յես դեռ չեմ սկսել...

ՀԵՂԻՆԵ. Ժամանակ շատ ունիս, կը վերջացնես, դեռ փետրվար ամիսն ե... Աշտոը ժողովը նշանակել ե կյուրակի յերեկոյան... Հրավիրել ե բոլոր բանվորական թաղերից ներկայացուցիչներ... Ժողովը նշանակել ե իրանց դահլիճում...

ՆՈՒՆԵ. Այն շքեղ դահլիճը ե մեր խոնավ նկուղը...

ՀԵՂԻՆԵ. Ամենքը չեն կարող պալատներում ապրել...

ԱՐՏԱՎԱԶԴ. Իսկ ինչո՞ւ նրանք պետք ե պալատներում ապրեն, ինչով են նրանք մեղանից ավելի...

ՆՈՒՆԵ. Վոչ Հեղինե, միտքս չե հաշտվում, այդ անարդարությունն ե ե այդ անարդարության դեմ պետք ե կռվել... Արտավազդը իրավացի ե... (գնում են):

ԱՇԽԵՆ. (Իրան յեով Արտավազդի համար ածում ե թեյ. Ի՞նչ ես պատուհանի մոտ կանգնել, դեհ յեկ նստիր, թեյը սառչում ե...)

ԱՐՏԱՎԱԶԴ. Թող սառչի... Կան մարդիկ վորոնք կարողանում են ամեն բան տանել ե դու ինքդ գիտես, վոր յես այդ մարդկանց թվին եմ պատկանում... Դու

խմիր գնա... Յես կը սպասեմ... Հայրդ կը դարձնի և միասին կը խմենք...

ԱՇԽԵՆ. (Վիրավորված). Դու հետզհետե դառնում ես անտանելի...

ԱՐՏԱՎԱԶԴ. Միթե բեզ զայրացնում ե վոր յես կանգնել եմ պատուհանի առաջ և միթե իմ ներկայությունը բեզ համար այդքան անտանելի ե դարձել...

ԱՇԽԵՆ. Արտավազդ...

ԱՐՏԱՎԱԶԴ. Աշխեն, յես խնդրում եմ միայն մի բան, յեղիր փոքր ինչ բարի, մի ստեղծիր այնպիսի դրություն, վոր յես ստիպված լինեմ հեռանալու... Միթե դու ինձ սրիկայի տեղ ես ընդունում...

ԱՇԽԵՆ. Յես չեմ ասում, վոր դու սրիկա ես, բայց կան սրիկաներ... Սակայն վո՞չ, վո՞չ, (հուզված) դու չը մտածես, մի վայրկյան անգամ չը կասկածես, վոր խոսքերս բեզ ե վերաբերում... Այս խոսքերը պետք ե ուրիշին ասել...

ԱՐՏԱՎԱԶԴ. Աշխեն, յես կը լինեմ քո ամենամոտ ընկերը...

ԱՇԽԵՆ. (ինքն իրան). Վորքան լավ ե ունենալ մոտ ընկեր... Կարող ես բանալ սիրտդ, ասել ամեն ինչ... Սակայն այս ամենը ինչո՞ւ այսպես ուշ...

ԱՐՏԱՎԱԶԴ. Աշխատում ենք միասին, մի գործարանում, ապրումենք մի սենյակում, ինչո՞ւ ես դու ինձանից փախչում, խուսափում... Ձե՞ վոր յես այստեղ, այս տանը մի հարազատ զավակ եմ...

ԱՇԽԵՆ. Յես այդ ամենը շատ լավ գիտեմ, գուցե ե Հեղինեն իր ուսումովը քեզ ե պարտական, յեթե դու չը լինիր դուցե հայրիկը վաղուց հաներ նրան գիմնադիոնից...

ԱՐՏԱՎԱԶԴ. Յերբ յես լուսաբացին վերադառնում եմ գործարանից ե տեսնում եմ Հեղինեն սեղանի մոտ նստած, լամպը առաջը դրած, նսյում եմ նրա աչքերին, տեսնում եմ քունը կոտրած, գունատ դեմքով... Մտքովս ինչե՞ր ե անցնում... Պառկում եմ մահճակալիս վրա, մտածում եմ, մտածում, բայց զգում եմ վոր լնչինչ չեմ կարող անել ե չեմ կարող ոգնել. ծնողներս ինձ լույս աշխարհ են բերել, փողոց շարտել ե ամբողջ իրանց ծնողական պարտականությունը դրանով վերջացրել...

ԱՇԽԵՆ. Քեզ նման շատերը կան...

ԱՐՏԱՎԱԶԴ. Յեթե մայրդ չը լիներ, ո՞վ գիտե թե ինձ հետ ինչ կարող եր պատահել. ինձ անհայտ ծնողներս վոչինչ չեն տվել բացի այս ուժեղ բազուկներիցս...

ԱՇԽԵՆ. Բայց այժմ...

ԱՐՏԱՎԱԶԴ. Այժմ ծախում եմ բազուկներս ուշժը ե զգում եմ, վոր վոչ այլ ինչ եմ յեթե վոչ կապիտալի ստրուկ, ե իբրեւ կապիտալի ստրուկ՝ ի՞նչ կարող եմ անել... Յեթե դու գիտենայիր թե ինչեւ կատարվում...

ԱՇԽԵՆ. Արտավազդ...

ԱՐՏԱՎԱԶԴ. Յես չեմ վախենում վոչ աքսորից, վոչ կախաղանից... Ստրուկները...

ԱՇԽԵՆ. Դու ինքդ քո բերանով կարդում ես քեւ դատավճիռ, ինքդ ես ասում, վոր մենք ստրուկներ ենք, իսկ ստրուկների համար գոյություն չի կարող լինել նալ վոչ սեր, վոչ զգացմունք...

ԱՐՏԱՎԱԶԴ. Աշխեն...

ԱՇԽԵՆ. Այժմ ժամանակ ե գործարան գնալու,



շուտով կը լսվի գործարանի յերկրորդ սոււրցը և այդ սոււրցը ավելի ուժեղ ե, ավելի հրամայող՝ քան քո զգացմունքները...

ԱՐՏԱՎԱԶԴ. (Կանգ եւ առնում). Աշխեն, դուք եւ կարծում ես ձեռքերիս նման սիրտս ել ե կոպիտ... Յես քեզ սիրում եմ այնպիսի ջերմ սիրով, վորով վոչ վոք, վոչ վոք չի կարող սիրել, իսկ յեթե դու ինձ ասում ես և արհամարհում այն ժամանակ...

ԱՇԽԵՆ. Այն ժամանակ ի՞նչ...

ԱՐՏԱՎԱԶԴ. Յես կը հեռանամ այստեղից...

ԱՇԽԵՆ. Դու կը մնաս այստեղ...

ԱՐՏԱՎԱԶԴ. Վոչ, յես չեմ կարող մնալ, յես կը հեռանամ...

ԱՇԽԵՆ. (Առանց Արտավազդին նայելու). Արտավազդ, մի խոսիր այդպես... Հենց մի քանի րոպե առաջ ասում եիր, վոր գիտակից բանվորների թիվը կարելի ե մատնների վրա հաշվել... Ինչ իրավունք ունես հեռանալու...

ԱՐՏԱՎԱԶԴ. Միենհայն չե աշխատել այստեղ թե մի ուրիշ տեղ... Իմ փոխարենը կը գա մի ուրիշը, կանցնեն տարիներ, յերեւի մի ուր կը հիշես դու ինձ, վոր յես քեզ սիրել, սիրել եմ իսկական սիրով, կը հիշես, վոր համբուրել եմ միայն քո մազերը ամենաանկեղծ և մաքուր զգացմունքով. Աշխեն, դուր ես դեմքդ դարձնում, քո աչքերը, քո արտահայտությունը ինձ ուրիշ բան են ասում...

ԱՇԽԵՆ. Արտավազդ, յես այն չեմ ինչ վոր դու կարծում ես...

ԱՐՏԱՎԱԶԴ. Աշխեն...

ԱՇԽԵՆ. Յես յեղել եմ ուրիշի... Ուրիշի... (զգացմունքները յեզ լացը խեղդում են):

ԱՐՏԱՎԱԶԴ. Աշխեն (ընում ե Աշխենի ձեռքերը, լսվում ե գործարանի սոււրց). Յես, յես քեզ սիրում եմ...

ՎԱՐԱԳՈՒԹԻ

2-րդ ԱՐԱՐՎԱՄԻ

Դահլիճ ճոխ և հարուստ կահավորութեամբ. դիմացի բաց դռները տանում են տրոպիքական բույսերով զարդարված նախասենյակը աջ դռները՝ Աննաի առանձնասենյակ, ձախինը սեղանատուն:

Առաջակողմը, աջ պատի մոտ Աննան գիմնազիոնի հագուստով նստած է ճոճվող աթոռի վրա, նայում է պատկերազարդ թերթին և միևնույն ժամանակ ճոճվում է. Աշոտը, ուռնաողական հագուստով, քայլում է: Յերեկոյան ժամը 6—նե:

ԱՇՈՏ. (Քայլում է). Ոհ, ոհ, ոհ... Մայրերը կատարյալ մի պատիժ են մարդու գլխին, շարունակ խըրատներ, խրատներ... Շատ է վրդոված վոր յես այստր ժողովը նշանակել եմ մեր տանը... Բանվորներին և բանվորուհիներին տանել չի կարողանում...

ԱՆՆԱ. Ո՞վ է քեզ ստիպում 8 տարեկան աշակերտի նման կանգնել և լսել նրա խրատները...

ԱՇՈՏ. Չը լսել... Դու կը տառ ինձ ծախսելու փողերը չե... Առանց փողի ինչ կարող եմ անել...

ԱՆՆԱ. Անկասկած, յեթե մայրիկը չը լիներ, վորտեղից, ինչպես կը տայիր Հեղինեին այն թանգագին նվերը և վորտեղից կը զարդարեիր նրա սեղանը ծաղիկներով...

ԱՇՈՏ. Հեղինե, Հեղինե, շարունակ, յուրաքանչյուր քայլափոխում Հեղինե, չը գիտեմ ինչ դարձալ ձեզ համար Հեղինեն...

ԱՆՆԱ. Յես հաճախ լինում եմ նրա մոտ, նա ըն-

ձերունիս է, տեսնում եմ նրան, տեսնում եմ քո նվերը... Ուղարկած ծաղիկներդ... Միթե յես կարողեմ աչքերս փակել...

ԱՇՈՏ. Դուք ստեղծում եք այնպիսի դրություն, վոր յես պետք ե... Այո, ուրիշ յեղք չը կա, պետք է վերջ տալ... Վերջ տալ մեր ծանոթութեանը...

ԱՆՆԱ. Հեղինեն դեպի քեզ անտարբեր չե, և ցվ գիտե թե ինչեր է մտածում...

ԱՇՈՏ. Ինչ ուզում է մտած է...

ԱՆՆԱ. Առաջ յերբ խոսք եր լինում նրա մասին, այդպես չեիր ջղայնանում...

ԱՇՈՏ. Դու ել սկսեցիր մայրիկի նման... Յես ուղղակի զարմանում եմ, վոր մի հասարակ բանից դուք կանայքդ պատմություններ եք ստեղծում... Ինձ համար Հեղինեն այլևս գոյութիւն չունի. դեհ այժմ գո՞ն ես...

ԱՆՆԱ. Յես բոլորովին չեմ ցանկանում, վոր քո և Հեղինեի պատմութիւնը այդպես վերջանա...

ԱՇՈՏ. Ապա ինչպես ես ցանկանում, վոր վերջանա...

ԱՆՆԱ. (Չայրացած). Դու չափ ու սահմանը կորցրել ես...

ԱՇՈՏ. (Գրպանից հանում է ժամացույցը յեվ նայում). Արդեն ժամանակն է, կես ժամից հետո կը հալածվեն, յես կարծում եմ յեթե մեջ տեղը սեղան դնենք լավ կը լինի...

ԱՆՆԱ. Ինչ կարիք կա գնելու, կարողես ուղղակի սեղանատանը ընդունել... Մինչև ժողովի բացվելը կարող են այնտեղ սպասել...

ԱՇՈՏ. Այդպես ել կարելի է... Ընկերուհիներիդ քողորին իմաց ես տվել...

ԱՆՆԱ. Այո, իմաց եմ տվել, գալու են կես ժամ վաղ...

ԱՇՈՏ. Այդ լավ էս արել... Փոքր ինչ կը դրադ-վենք... ժամանակ կ'անցկացնենք...

ԱՆՆԱ. Նրանք ինձ մոտ են գալիս և ինձ հա-մար...

ԱՇՈՏ. Այդ դեռ էս հարց ե թե ո՞ւմ համար են գալիս...

ԱՆՆԱ. Չը լինի թե դու կարծում ես, վոր ընկե-րուհիներս քեզանով շատ են հետաքրքրվում...

ԱՇՈՏ. Դիտեմ վոր դու և ընկերուհիներդ Հեղի-նեի տանը ապրող մրտ և կեղտոտ Արտավազդով շատ եք հետաքրքրվում... Հա, հա, հա...

ԱՆՆԱ. Արտավազդին թող հանգիստ... Գիշեր—ցե-րեկ աշխատում ե, իր ճակատի քրտինքով մի կտոր հաց ե ձեռք բերում, նա քո ընկերը չե...

ԱՇՈՏ. Հեղինեի մոտ գնալ գալը, շուտ շուտ այն-տեղ լինելդ առանց հետևանքի չի մնում... Յերեի Ար-տավազդը իր հաստ բազուկներով քեզ վրա ուժեղ տպավորություն ե թողել և դու սիրահարվել ես. ահա թե ինչու համար ե վերջին ժամանակներս Արտավազդը հաճախ մեր կողմը յերևում, հա, հա, հա... Իսկ մայ-րիկը կարծում ե թե ինձ ե հետևում, հա, հա, հա...

ԱՆՆԱ. Թող քո կատակները մի կողմ...

ԱՇՈՏ. Յես խոսում եմ առանց կատակի. ընկե-րուհիներդ ինձ համար չեն գալի, այդ ճիշտ ե, բայց միթե՞ դու կարող ես ժխտել և ասել վոր նրանք ամեն-քը, ամենքը ինձ համար չեն...

ԱՆՆԱ. Լավ լերադ ե...

ԱՇՈՏ. Դուք կանայքդ կյանքի արժեքը գտնում

եք միայն մի բանի մեջ, դուր գալ տղամարդկանց և դուր գալու համար վոչ մի միջոցի առաջ կանց չառնել...

(Աննան զայրացած զանգահարում ե յեվ աշ-խատում ե զանգի ծայնով խլացնել Աշոտի ծայնը-մտնում ե աղախինը):

ԱՆՆԱ. Շուտով գալու են ընկերուհիներս, ինք-նաեռը կը պատրաստես, քաղցրավենիքը կը հանես, իսկ կես ժամից հետո գալու են բանվորներ, բանվորուհի-ներ, նրանց կը տանես սեղանատուն... (Աղախինը զննում ե):

ԱՇՈՏ. Յերեակայի Հեղինեն արդեն վերջացրել, պատրաստել ե սպիտակ ծաղիկները...

ԱՆՆԱ. Դու շուտ շուտ պատահում ես Հեղինեին... Տես, վոր մի լավ դաս չը ստանաս և կողերդ ել Արտա-վազդը մի լավ չը ջարդի... Նա շատ ուժեղ բազուկներ ունի, նրա բազուկները քո բազուկների նման գիմնա-ստիկայով չե զարգացած, այլ գործարանի մեքենանե-րով. նրա մի բռնցքը բավական ե, վոր դու գետին փռվես, դուր չե վոր մայրիկը քեզ զգուշացնում ե...

ԱՇՈՏ. Յես վոչ վորից չեմ վախենում... (զրուա-նից հանում ե փողերը յեվ ցույց ե տալի). Սա մի ախպրի ույժ ե, վորի առաջ ամենքը խոնարհվում են և սրանով ամենքին կարելի ե գնել... Նույն իսկ ըն-կերուհիներդ...

ԱՆՆԱ. Յեթե այդ ամենի մեջ գտնում ես բավա-կանություն և կարծում ես վոր կը մնաս առողատիժ...

ԱՇՈՏ. Պատիժ, հա, հա, հա... Ո՞վ պետք ե սրա-տե ինձ...

ԱՆՆԱ. Հասարակությունը...

ԱՇՈՏ. Հասարակությունը անասունների մի

հոտ ե, վորոնց վոր կողմը ուզենաս կարող ես այն կողմը քշել...

ԱՆՆԱ. Վորորմեկի եակ...

ԱՇՈՏ. Հա, հա, հա... Դու չունիս քաջություն ապրելու այնպես ինչպես ինքդ ես ցանկանում ե ինչպես քո յերակների մեջ հոսող արյունը. քո մեջ խոսում ե միշտ հաղթվողի գերում ֆապող կանացիությունը ե վոր ամենագլխավորն ե՝ նախանձը... Յեթե դու լինեիր գեղեցիկ...

ԱՆՆԱ. Յես միայն կարող եմ ծիծաղել...

ԱՇՈՏ. Այո, քեզ մնում ե միայն ծիծաղել, հա, հա, հա... Յեթե դու պատկանեիր գեղեցիկների թվին՝ կը յերգեիր այնպես ինչպես քո ընկերուհիներդ... (ըսյալով ե). Արտավազդը...

ԱՆՆԱ. Արտավազդին թող հանգիստ, նա քեզ նրման պարազիտ չե ե դատարկապորտ...

ԱՇՈՏ. Պարազիտ, դատարկապորտ, հա, հա, հա... Դու խոսում ես այնպես, կարծես այս հարկի տակ չես մեծացել այլ մի ուրիշ տեղ...

ՀԵՂԻՆԵ. Յես քեզ նման աջ ու ձախ չեմ վատնում հայրիկի հարստությունը... (Դաշնամուրի վրա թափթփած տետրակները հավաքում ե, միմյանց վրա դարսում ու հագիվ ե կարողանում կատաղությունը զսպել):

ԱՇՈՏ. Յես աշխարհ եմ յեկել, վոր ապրեմ, ապրեմ, հասկանում ես թե՞ վոչ... Ախ ծխատուփս... (նայում ե գրպանները). մոռացիլ եմ սեղանատանը (անցնում ե սեղանատուն):

(Աննան խոր մտածմունքի մեջ, դաշնամուրի տուփ մնում ե կանգնած, ապա նստում ե, մի քա-

նի անգամ խփում ե կլավիշներին. կարճ ժամանակից հետո, նախասենյակից աղմուկով մտնում են ընկերուհիները, բոլորն ել գիմնագիտնի հագուստներով):

ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐ. Բարե... Բարե...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Գիտես, մենք այս բոպիս պատահեցինք տեսչին, հայտնեց, վոր Հեղինեն մեծ հաջողություն ունի ե կարող ե վոսկե մեզալ ստանալ...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Բայց ափսոս, վոր չի կարող շարունակել...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Գիտեք ի՞նչ, յեկեք մեր մեջ փող հավաքենք, ուղարկենք նրան մեր հաշվով համալսարան...

III. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Հեղինեն մեր առաջարկությունը չի ընդունի, ավելի լավ ե այդ մասին բերան չը բանանք...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Աղքատ ու հպարտ... Յերբ վոր այդպես ե վոչինչ հարկավոր չե, թող ինչ ուզում ե անե...

IV. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ինչեք վիճում, ամեն մարդ իր համար ինքը պետք ե մտած ե, այ քեզ բան, կարծես մենք այստեղ ուրիշ բան չունենք, ինչե...

ԱՇՈՏ. (Մտնում ե սեղանատնից ծխելով). Բարե, բարե, ուրախ եմ, վոր ձեզ տեսնում եմ այստեղ... (Զանգահարում են):

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ահա զանգի ձայն, անպատճառ Հեղինեն ե...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Գնանք տեսնենք, գնանք... (Ամենքը բացի Աշոտից վազում են դեպի նախասենյակ յեվ վերադառնում են Հեղինեի հետ միասին):

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Տեսնում եք, ասածս կատարվեց
և Հեղինեն այստեղ է...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Գիտես Հեղինե, մենք բեզ
կարող ենք շնորհավորել... (Հեղինեն ուրախ ժպտով
նայում է Աշոտին):

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Այո, այո, մենք բեզ կարող
ենք շնորհավորել...
(Աշոտը հանկարծ յերեսը դարձնում է յեվ անցնում
մի կողմ, Հեղինեն Աշոտի այս վարմունքը նկատում
է, վատ է դառնում, աշխատում է հենվելու տեղ
գտնել):

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. (Տալիս է աթոռ). Դու բեզ
վատ ես զգում...

Հեղինե. (Մտաւում է). Գլուխս հանկարծ պտույտ
յեկալ... Հոգնած եմ...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Իսկապես մենք քեզ կարող
ենք շնորհավորել, կես ժամ առաջ պատահեց տեսուչը...
Հեղինե. Տեսուչը...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Այո, տեսուչը, հավանական
է, վոր դու վոսկի մեղալ ստանաս...

III. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ինչպէս գոչնատ ես Հեղինե...
Հեղինե. Ճիշտն ասած Հեի ուզում գալ, բայց Ա-
շոտը շատ խնդրեց...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Գիտենք, վոր դու ուզում ես
անպատճառ վոսկի մեղալ ստանալ. յերևի ամբողջ գի-
շերները Հեա քնում. դու վերջին ժամանակներս շատ,
շատ ես փոխվել, դու այնքան գոչնատվել, նիհարել ես,
վոր հիվանդի տպավորություն ես թողնում...

(Ընկերուհիներից մեկը մտնում է նուխասե-
նյակից. տեսնում է վոր ամենքը զբաղված են խո-

տակցությամբ, իսկ Աշոտը կանգնած մի կողմ ծը-
խում է. մի վայրկենաչափ մտածում է, հանկարծ
մոտենում է հետեւից յեվ ձեռքերով ծածկում է Ա-
շոտի աչքերը. ընկերուհիները նկատում են յեվ
սկսում են ծիծաղել):

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ապա, պարոն ինժիներ, իմա-
ցեք ով է...

ԱՇՈՏ. Ի՞նչ վարձատրություն, յեթե իմանամ...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Մի լավ ապտակ...

ԱՇՈՏ. Տարրինակ վարձատրություն...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Այնպիսի ապտակ, վոր կար-
մբեք ինչպես յեփած խեցեալներ...

ՁԱՅՆԵՐ. Յեփած խեցեալներ... Յեփած խեցե-
ալներ, հա, հա, հա...

ԱՇՈՏ. Վոչինչ ընդունում եմ, համաձայն եմ. ան-
պատճառ որիորդ Սաթենիկն է...

ՁԱՅՆԵՐ. Վոչ, վոչ, սխալվում եք...

III. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Սխալվում եք, պարոն ին-
ժիներ...

ԱՇՈՏ. Վոչինչ ծաղրեցեք, յերբ դիպումս կը ըս-
տանամ դուք ամենքդ ինձ մոտ կը գաք... Գիտե՞ք ի՞նչ
է նշանակում լինել ինժիներ...

III. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ինժիներ, հա, հա, հա... Սպա-
սեցեք վոր մենք ձեզ մոտ գանք և դուք ել...

ԱՇՈՏ. Կը գաք, վաղելով կը գաք...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Դեռ հարց ե՞րբ դիպում կը ստա-
նաք թե՞ վոչ...

ԱՇՈՏ. Կը ստանամ, կը ստանամ... Զուր եք այդ-
պես մտածում... Յես շարունակ լինում եմ մեր դու-
ծարանում, ուսումնասիրում եմ բոլոր մեքենաները,

մինչև անգամ մտածում եմ կատարելագործել. այն ինչ վոր մտածում եմ, յեթե հաջողվի ինձ, այն ժամանակ բանվորների թիվը 50%-ով կաբելի կը լինի կրճատել... Ծախսերի 50%-ը կրճատել գիտե՞ք ինչ ե նշանակում...:

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Այդ բոլորը ձեր յենթադրու-թյունն է... Հա, հա, հա...

ԱՇՈՏ. (Շուշափում ե ձեռքերը). Ո՛հ ինչ մեծ ձեռքեր են և ինչպիսի կոպիտ, տղամարդու ձեռքեր են սրանք. ուրեմն, ուրեմն անպատճառ Անահիտն է...

ՁԱՅՆԵՐ. Իմացար... Իմացար... ձիշտ է... (Անա-հիտը հեռանում ե):

ԱՇՈՏ. (Դառնում ե Անահիտին). Որիորդ, յես սպասում եմ ձեր ապտակին...

ԱՆԱՀԻՏ. Ձեռքերս կոպիտ են, ուրեմն յես ել կո-պիտ եմ, շատ բարի...

ԱՇՈՏ. Հավատացնում եմ որիորդ, յես բոլորովին մտադրություն հունեի ձեզ վերափորելու...

ԱՆԱՀԻՏ. Գիտեմ, վոր դուք հանկարծ, առանց մտածելու ճշմարտություն ասիք և միթե յես չը գի-տեմ, վոր ձեռքերս տղամարդու ձեռքեր են, հափազանց կոպիտ և անպետք ձեր նուրբ պոռնների համար... (Ժի-ծաղում են ամենքը):

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Յեթե յես ձեր տեղը լինեմ կը համբուրեմ ձեռքը...

ԱՇՈՏ. Միթե կարծում եք, վոր յես կարող եմ ուրիշ տեսակ վարվել...

ՁԱՅՆԵՐ. Հաշտություն... Հաշտություն... (մըտ-նում ե Նունեն):

ՆՈՒՆԵ. Ձեր աղմուկը լսվում ե դրսից...

ԱՆՆԱ. Պետք ե վորոշված ժամին լինել... Յես

ձեզ ամենքիդ հայտնեցի, վոր մենք կես ժամ վաղ հա-վաքվենք, իսկ դու...

ՆՈՒՆԵ. Ձիշտն առած սպիտակ ծաղկի տոնը և ձեր ժողովները այնքան ել չեն հետաքրքրում ինձ...

ԱՇՈՏ. Զուր եք այդպես խոսում, մեզանից ամեն մեկը պարտավոր ե կռվել թոքախտի դեմ... Դուք լավ գիտեք...

ՆՈՒՆԵ. Ավելի լավ ե վոչինչ չը գիտենալ...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Դու դեռ կյանք չը մտած ա-մեն ինչ տեսնում ես վատ գույներով... Պետք ե կյան-քին նայել զգաստ աչքով...

ԱՇՈՏ. Անկասկած...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Կյանքը, բնությունը մեզ հա-մար է...

ԱՇՈՏ. Որիորդ Նունե, դուր եք այդպես մտա-ծում, կյանքը՝ բնկնող աստղերի վայրկենական ցուքն ե հավիտենական խավարի մեջ... (I Աշակերտունին խփում ե դաշնամուրի կլավիշներին, Աշոտը անմի-ջապես դառնում ե I աշակերտունուն). Դուք ձեր մասներով ուզում եք ասել, վոր այս խոսակցությունը հափազանց ձանձրալի է...

ՁԱՅՆԵՐ. Նվագել... Նվագել մի բան... Հրաշալի միտք... Հրաշալի միտք...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. (Խփում ե կլավիշներին յեզ դառնում ե մոտը կանգնած VI աշակերտունուն). Դե՛ս ապա սիրելիս...

VI. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Վնչ, ներողություն, յես տրա-մադրություն հունեմ վոչ յերգելու և վոչ ել պարելու...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. (Ընդհատում ե Նվագելը). Ու-զե՛մ ես վոր մենք քեզ շատ խնդրենք...

VI. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ձե՛ վոր յերգելու համար պետք է լինի տրամադրություն, իսկ պարել...

ԱՆՆԱ. Հազուստներս քո տրամադրության տակն են, խնդրեմ...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ուրեմն ուզում ես հազուստներդ փոխել (վեր ե կենում). դեհ գնանք, գնանք Անայի առանձնասենյակը...

VI. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Այդ ուրիշ հարց ե (ամենքը գնում են, դահլիճում մնում են միայն Աշոտը յեվ Նունեն. նույն րուպին դիմացից մտնում են քանվորներ, քանվորուհիներ. Աշոտը անմիջապես դիմավորում ե, իսկ Նունեն դաշնամուրի վրա դարսած տետրակները մեկ մեկ նայում ե):

ԱՇՈՏ. (Դառնում ե քանվորներին). Շատ ուրախ եմ, ուրախ եմ...

I. ԲԱՆՎՈՐ. Մենք փոքր ինչ վաղ ենք յեկել, դեռ ժամը 7-ը չը կա...

ԱՇՈՏ. Խնդրեմ, խնդրեմ, համեցեք սեղանատուն... Դուք այսոր ամենքդ իմ հյուրերն եք (առաջնորդում ե սեղանատուն):

(Դիմացից մտնում են շքեղ հագնված տիկիներ յեվ խոսելով դիմում են դեպի սեղանատուն):

I. ՏԻԿԻՆ. Յես քեզ ասում եմ, վոր բանվորների, առհասարակ ստորին խավերի՝ նա մանավանդ գյուղացիների մեջ ավելի շատ են գեղեցիկ ե առողջակազմ տղամարդիկ, դու շատ զուր ես վիճում ինձ հետ, յես դիտել, հետեւել եմ... Մերոնք այլասեռված են հենց փոքր հասակից... Գունատ... Դեղնած... Հենց վերջուր իմ ծառային...

II. ՏԻԿԻՆ. Այն, քո ծառան վորքան առողջակազմ ե ե գեղեցիկ...

I. ՏԻԿԻՆ. Տեսնում ես սիրելիս, ինքդ հաստատում ես ասածներս... Ահա այսոր այստեղ հավաքվելու են բանվորների ներկայացուցիչներ զանազան գործարաններից, լավ նայիր, դիտիր, տես ասածներս ճիշտ չե՞ արդյոք... Համեմատիր մեր ամուսինների հետ... Մեր ամուսինները այնպես նիհար, դեղնած, վտիտ, իսկ նրանք... (մտնում են սեղանատուն):

(Սեղանատնից դուրս ե գալի Աշոտը, մոտենում ե Նունեին):

ՆՈՒՆԵ. Ինչքան տետրակներ են այստեղ. սա ի՞նչ ե, առանց նոտերի...

ԱՇՈՏ. Անցյալ որը կարդում եի գիրք, այդ փոքրիկ կտորը հանեցի, ուզում եմ դարձնել բանաստեղծություն ե ձայնագրել...

ՆՈՒՆԵ. Գեղարվեստը հետաքրքրում ե ձեզ...

ԱՇՈՏ. Յես կուզենայի լսել ձեր կարծիքը...

ՆՈՒՆԵ. (Թերթը մի կողմս ե դնում). Դուք արդեն հավանել եք ե նույնիսկ արտագրել... Ամեն մարդ ունի իր ճաշակը...

(Խփում ե կլավիշներին, անորոշ ձայներ հանում. Աշոտը քայլում ե):

(Դիմացից մտնում են տիկիներ):

I. ՏԻԿԻՆ. Աշոտի արածը շատ խելացի բան ե... Յես Աշոտին հավանում եմ... Նա վոչ վոքին չի լսում...

II. ՏԻԿԻՆ. Սպիտակ ծաղկի տոնի առթիվ ընդհարվել ե հոր հետ... Հայրը վոչ մի ժողովում չի յերևում...

I. ՏԻԿԻՆ. Ժիշտն ասած, Աշոտը շատ լավ ե մտա-

ձեւ, մենք հնարավորութիւն չունենք մոտից ծանոթանալու մեր բանավորների հետ... Կան բանավորներ, վերոնք տաքիններ շարունակ աշխատում են մեր գործաբաններում և մենք չենք ճանաչում նրանց...

II. ՏԻԿԻՆ. Այժմ մենք հնարավորութիւն ունենք ծանոթանալու...

I. ՏԻԿԻՆ. Այստեղ յետ մեկ մեկ դիտելու եմ ամենքին (մտնում են սեղանատուն):

ԱՇՈՏ. (Կանգ եւ առնում). Նվագեցեք մի բան, յետ շատ եմ սիրում յերաժշտութիւն...

ՆՈՒՆԵ. Այնքան լավ չեմ նվագում, վոր կարողանամ ձեզ բավարարել...

ԱՇՈՏ. Նվագելու համար հարկավոր ե զգացմունք, սիրտ... Դիտեմ վոր դուք...

ՆՈՒՆԵ. Գեղեցիկ եք խոսում...

ԱՇՈՏ. Միթե յետ իրավունք չունեմ արտահայտվելու... Ոհ, յետ զիտեմ, վոր անկեղծութիւնը միշտ հալածվում ե...

ՆՈՒՆԵ. Յետ ամեն ոք տեսնում եմ Հեղինի սեղանի վրա ծաղիկներ...

ԱՇՈՏ. Կար ժամանակ, վոր նա ինձ համար մի հեքիաթ եր, մի նոր աշխարհ, իսկ այժմ...

ՆՈՒՆԵ. Իսկ այժմ ինչ (Ծփում ե կլավիշներին). Դուք լսում եք...

ԱՇՈՏ. Անցնենք մյուս սենյակը, տեսնենք ինչով են զբաղված...

(Դիմում են դեպի մյուս սենյակ):

ՆՈՒՆԵ. Ուրեմն դուք չեք ուզում պատասխանել իմ հարցին... (Մտնում են աջակողմյան սենյակը):

(Դիմացից մտնում են բանվորներ աջ ու ձախ նայում ու զարմացած դիտում են դահլիճը):

I. ԲԱՆՎՈՐ. Հը ինչ ես բերանդ բացել...

II. ԲԱՆՎՈՐ. Ինչ ահագին դահլիճ ե...

III. ԲԱՆՎՈՐ. Դու ասա ձմեռը վոնց են տաքացնում...

I. ԲԱՆՎՈՐ. Ինչ ե, աղնե պակաս թե մաղը... Միայն թե ձեզ համար ստրուկները անպակաս լինեն...

III. ԲԱՆՎՈՐ. Մեզ համարները... Այնպես ես խոսում, կարծես թե՛ դու մեզ հետ չես աշխատում...

I. ԲԱՆՎՈՐ. Աշխատում եմ ձեզ հետ... Յեթե դուք ել մտածեք այնպես ինչպես յետ եմ մտածում, այստեղ քարը քարի վրա չի մնա...

III. ԲԱՆՎՈՐ. Մի ծաղկով գարուն չի գա...

I. ԲԱՆՎՈՐ. Բայց մենք կը բերենք... Կը բերենք գարունը...

III. ԲԱՆՎՈՐ. Զուր ես այդպես խոսում... Դու շատ լավ գիտես, վոր յետ ունեմ 5 յերեխա... Յեթե յետ համոզված լինեմ, վոր քեզ լսելով մեր գրութիւնը կը լավանա...

I. ԲԱՆՎՈՐ. Դուք ամենքդ ստրուկներ եք և վորդորմեղի ստրուկներ... (մտնում են սեղանատուն):

(Դիմացից մտնում ե Արտավազը մի բանի բանվորների հետ):

ԱՐՏԱՎԱԶԴ. Այո, այդ ամենը ճիշտեք ասում...

I. ԲԱՆՎՈՐ. Ուրեմն դու համաձայն ես մեզ հետ...

ԱՐՏԱՎԱԶԴ. Յետ վորոշել եմ սպիտակ ծաղիկ տունը սրանց քիթը հանել...

II. ԲԱՆՎՈՐ. Բայց ինչպես...

ԱՐՏԱՎԱԶԴ. (Զաշելով միկողմ). Վոստիկանու-

թյունը վոչ մի բան չի կարող կասկածել... Ձանազան փողոցներից միաժամանակ կը դիմենք դեպի հրապարակ, կը կազմակերպենք մեր տոնը՝ կարմիր դրոշակներով... Բայց մի բան այս մեր ցույցի մասին մինչև վերջին րոպեն, բացի գործին նվիրված բանվորներից վոչ մի մարդ չը պետքե գիտենա...

II. ԲԱՆՎՈՐ. Հրաշալի միտք...

III. ԲԱՆՎՈՐ. Արտավազդ, ընտրել ես ամենահաջող ուր, այո, ժամանակ և արդեն, պետքե, պետքե, կազմակերպել մեր ցույցը...

IV. ԲԱՆՎՈՐ. Իսկ ինչու՞համար ենք յեկել և ի՞նչ ունենք այստեղ...

ԱՐՏԱՎԱԶԴ. Մինչև ժողովի բացվելը կարող ենք մնալ... Այսօր բոլոր թաղերից գալու են բանվորներ, բանվորուհիներ, այս շքեղ դահլիճը, այս թանկագին և վսակեզոծ կահ-կարասիքը ամենալավ միջոցն է ցույց տալու թե ով՞ե աշխատում և ով՞ է վաճելում...

III. ԲԱՆՎՈՐ. Այս ամենը մեր աշխատանքն է, մեր քրտինքն է...

ԱՐՏԱՎԱԶԴ. Դեհ, աղերք, այժմ պետք է ցրվել... (վրձանք մտնում են սեղանատուն, վրձանք մնում դահլիճում)։

(Մտնում են բանվորների ուրիշ խումբ)։

I. ԲԱՆՎՈՐ. (Դիմում է II բանվորին)։ չը, դեմքդ թթված է, ինչ՞ե պատահել...

II. ԲԱՆՎՈՐ. Միքայելի սենյակը խուզարկել են...

I. ԲԱՆՎՈՐ. Միքայելի... Զուր է, վոչինչ չեն գտնի...

III. ԲԱՆՎՈՐ. Այսօր բանվորների ամբողջ խոսակ-

ցության առարկան Միքայելն է... Ինչպես յերևում է Միքայելին կը բռնեն... Վոստիկանները հետևում են...

I. ԲԱՆՎՈՐ. Վոչինչ, մենք սրանց հախիցը կը գանք... Են որը գցենք, վոր ճանապարհ չը գտնեն... (ցրվում են զանազան կողմեր)։

(Դիմացից մտնում են յերկու աշակերտուհիներ յեվ վիճելով դիմում են դեպի աջակողմյան սենյակը)։

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ասում են Աշոտը շարունակ լինում է Հեղինեի հետ...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Բախտի բան է, ի՞նչ կարող ես անել...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ինչ, կարծում ես Աշոտը...

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Ինչո՞ւ ես այդպես խոսում, Հեղինեն միթե վատ ազնիվ է...

I. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Յես քեզ ասում եմ, վոր Աշոտը պսակվող պտուղ չէ և այն ել Հեղինեի հետ... Աշոտը միայն ժամանակ է անցկացնում նրա հետ և ուրիշ վոչինչ... Դու կարծում ես, վոր Աշոտի ծնողները չը գիտեն, շատ լավ գիտեն, բայց մատների արանքներով են նայում... (մտնում են աջակողմյան սենյակը)։

(Դիմացից մտնում են մի խումբ բանվորներ, բանվորուհիներ ու խոսելով մտնում են սեղանատուն)։

I. ԲԱՆՎՈՐ. Մինչև սպիտակ ծաղկի տոնը ունենք ամբողջ յերկու ամիս...

I. ԲԱՆՎՈՐՈՒՀԻ. Յես չեմ հասկանում ինչ՞ կա-բիք կամ այսպես շուտ սկսել և զբաղեցնել մեզ...

II. ԲԱՆՎՈՐ. Կարծում եք հեշտ ե...

III. ԲԱՆՎՈՐ. Հազար ու մի բան է հարկավոր, հազար ու մի բան կա շինելու, պետքե պատրաստել

ծաղիկներ, հրապարակների համար գտնել սեղաններ, աթոռներ, այս բոլոր աշխատանքների համար հրավիրել մարդիկ... Բաժանել նրանց խմբակներին, ամեն մի խմբակին հանձնել վորոշ թաղամաս... (մտնում են սեղանատուն):

(Աշակերտական սենյակից աղմուկով դուրս են գալի աշակերտուհիները. VI Աշակերտուհին գրնչուհու հագուստով յեվ դահիրան ձեռքին. I Աշակերտուհին նստում է դաշնամուրի առաջ, սկսում է նրվագել, VI աշակերտուհին կանգնած է դաշնամուրի մոտ):

II. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Մինչև ժողովն ունենք ուղիղ 20 րոպե...

III. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Մենք կարող ենք յերգել պարել...

IV. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. (Դիմում է VI աշակերտուհուն). Դեհ ապա սկսիր պարել...

III. ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ. Մենք սպասում ենք... (մի քանի հոգի մոտենում են VI աշակերտուհուն):

(Աշակերտուհիները փոքրիկ խմբակներ են կազմում. Աշտը յեվ Հեղինեն խորքում զբաղված են խոսակցությամբ. նկատելի յե, վոր խոսակցությունը սուր կերպարանք ունի. VI աշակերտուհին դուրս է գալի, սկսում է յերգել յեվ պարել. Աշտը յեվ Հեղինեն խոսելով ու վիճելով անցնում են առաջակողմը յեվ խոսակցությունը դառնում է լսելի):

ԱՇՈՏ. Յես վոչինչ չունիմ այլևս ասելու...

ՀԵՂԻՆԵ. Այդպես ուրեմն...

ԱՇՈՏ. Զուր էս մեղադրում ինձ... Յես չեմ բռնացել վոչ զգացմունքներիդ և վոչ ել սրտիդ վրա...

Այն ինչ վոր կատարվել է մեր մեջ, յեղել է յերկուսիս ցանկությունը...

ՀԵՂԻՆԵ. Յես հափշտակված եի, ապրում եի միայն քեզանով... Յես չգիտեմ... Զգիտեմ... Դու ինձ համար մի սրբություն եիր... Յես ամեն ինչ մոռացած... Իսկ այժմ... Ինչո՞ւ յես լռել... Ոոսիր, խոսիր Աշոտ... Յես քեզանից բացատրություն եմ պահանջում...

ԱՇՈՏ. Բացատրություն... Միթե քեզ համար պարզ չե...

ՀԵՂԻՆԵ. Ասա ճշմարտությունը...

ԱՇՈՏ. Դու ուզում էս բռնանալ ինձ վրա...

ՀԵՂԻՆԵ. Աշոտ, դու այժմ ինձ հետ ուրիշ լեզվով էս խոսում...

ԱՇՈՏ. Յես չեմ կարող կեղծել...

ՀԵՂԻՆԵ. (Մեծ դժվարությամբ զսպում է զգացմունքները). Յես, յես այժմ հասկանում եմ քեզ... Ուրեմն մայրիկի ասածները ճիշտ եր, նա իրավացի յեր...

ԱՇՈՏ. Մենք տարբեր շրջանի մարդիկ ենք, տարբեր հասկացողությունների տեր, վորքան շուտ հեռանանք միմյանցից այնքան լավ...

ՀԵՂԻՆԵ. (Հուզված). Յես հավատացել եմ խոսքերիդ, ամբողջ հոգովս, զգացմունքներովս նվիրվել, կապվել քեզ հետ...

ԱՇՈՏ. Այդպիսի դեպքեր պատահում են բոլոր օրիորդների հետ... Դեհ ինչ կարող ենք անել... Անցնում է ժամանակ և մոռացվում ամեն ինչ...

ՀԵՂԻՆԵ. (Հուսահատ յեվ վշտի ծանրությունից ընկճված). Ուրեմն յես յեղել եմ քեզ համար միայն մի գեղեցիկ... գեղեցիկ խաղալիք և ուրիշ վոչինչ...

ԱՇՈՏ. Դու գուր էս մի շատ սովորական յերե-

վաղթ աղապես մեծացնում և սրտիդ մոտ ընդունում...
Քո քույր Աշխենն էլ...

Հեղինե. (Սարսափած). Աշխենը...

ԱՇՈՏ. Որինակ վերցրու նրանից... Ուզի՞լ 3 տարի
առաջ նույն կերպ հիասթափվեց... Մի անգամ լա-
ցեց և ամեն ինչ տվեց մոռացության...

Հեղինե. Աշխենը... Քեզ լրա... Ուրեմն նա էլ...
Նա էլ... (ուշաթափվում է)։

ԱՇՈՏ. Զուր... ջուր... (Պարը դադարեցնում են,
ընկնում և իրարանցում)։

Վ.Ա.ՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՎԱՆ

Քաղաք, հրապարակ բանվորական թաղում. դիմաց՝ փողո-
ցի խորքում յերևում են զործարաններ, զործարանների բարձր
ծխնելույզներ։ Գաղանային յեղանակ է, սպիտակ ծաղիլի ուր աղ-
ները, փողոցները, հրապարակը զարդարված են կանաչ ճյուղերով
և ծաղիկներով։ Բեմը միացած է դահլիճի հետ. հեռվից լսվում է
յերաժշտություն. առավոտյան ժամը 10-ն է. ձախակողմյան փո-
ղոցից դուրս են գալիս Հեղինեն և Աշխենը ու խոսելով անցնում
են դեպի աջակողմյան փողոց։

ԱՇՈՏԵՆ. Այսօր ժամը 4-ին վեր կացա... Ամբողջ
բանվորական թաղերը շրջել եմ... (Խորքում յերևվում
և Արտավազը, դիտելով շուրջը, գալիս է առաջ)։

Հեղինե. Դու Արտավազից հետ չես մնում...

ԱՐՏԱՎԱԶԴ. (Մոտենում է Աշխենին). Ամենքին
տեսար...

ԱՇՈՏԵՆ. Ոհ, յես այսօր այնպես արագ արագ եի
ման գալի, վոր կյանքիս մեջ յերբեք այդպես չեմ ման
յիկել... Զարմանալի բան, բոլորովին հոգնածություն
չեմ զգում... Մենք այսօր...

Հեղինե. Ի՞նչ կարող եք անել նրանց...

ԱՐՏԱՎԱԶԴ. Հեղինե, յերդվում եմ այն ամենով՝
ինչ վոր ինձ համար ամենանվիրականն է, վոր մենք
կը վոջնչացնենք, կը վոջնչացնենք նրանց և հետու չե
այդ ուր...

ԱՇՈՏԵՆ. Ոհ, յես այնպես եմ վոգևորել բանվոր-

ներին, վոր այսոր նրանց կրօնքերից թույն է ժայթ-
քելու... (Գնում են ձախակողմյան փողոցով):

(Յերաժշտութիւնը ուժեղանում է. դիմացից
մի խումբ քանվորներ ընրում են սեղան, դնում են
աջ կողմը):

1. ԲԱՆՎՈՐ. (Աշխատում է սեղանը ուղղել, վո-
տի տակը դնում է տախտակի կտոր). Թոքախտի դեմ
կոխվի ե հայտարարված...

II. ԲԱՆՎՈՐ. Կովում են ամենքը, հարուստ թե
աղքատ...

III. ԲԱՆՎՈՐ. Կովում են սպիտակ ծաղիկներով,
հա, հա, հա...

(Դահլիճում յերեկում են շքեղ հագնված որի-
որդներ, սպիտակ ծաղիկներով լի զամբյուղներ ձեռ-
քին, քարծրանում են ընմ, մոտենում են քանվոր-
ներին):

ՈՐԻՈՐԴ. Ահա սրանք ծաղիկներ չունեն... (քան-
վորները կրծքին ամրացնում են ծաղիկներ). Այսոր
սպիտակ ծաղկի տոնն է, պետք է ամենքդ ծաղիկներ
ունենաք...

(Ձախ կողմից մի ուրիշ խումբ քանվորներ ըն-
րում են ամբիոն, պատվանդան յեվ սկսում շինել
առաջակողմ):

1. ԲԱՆՎՈՐ. Վորքան պետք է վճարել...

ՈՐԻՈՐԴ. Վորքան ցանկանում էք, վորքան հնա-
րավորութիւն ունեք...

1. ԲԱՆՎՈՐ. Մենք բանվորներ ենք... (փողերը զը-
ցում են տուփի մեջ). մեզանից ավելի չի կարելի սպա-
սել...

ՈՐԻՈՐԴ. Շնորհակալ ենք, շնորհակալ ենք... (անց

նում են դահլիճով, հասարակութան մեջ ծաղիկներ
բաժանելով):

III. ԲԱՆՎՈՐ. Կարծում ես իսկապես թոքախտի
դեմ են կովում ե մոտածում են մեզ համար... Նրանք
միայն զվարճանում են ե մեզ հիմարացնում...

* * *

1. ԲԱՆՎՈՐ. (Խփում է մուրճ, ամրացնում է
ամբիոնը). Աչքերս քաղցածութիւնից մթնում են... Ի՞նչ
զլիտվա եմ տալի նրանց սպիտակ ծաղիկը...

IV. ԲԱՆՎՈՐ. Յեթե դու հիվանդ լինելիք թո-
քախտով՝ այդպես չեիր խոսի...

II. ԲԱՆՎՈՐ. Կարծում ես հավաքած կոպեկներով
կարելի յե դորձ կատարել ե փրկել թոքախտավորնե-
րին...

IV. ԲԱՆՎՈՐ. Գոնե փոքր ինչ կարելի յե թեթե-
վացնել նրանց վիճակը... Վորոշել են սանատորիա բա-
նալ ե պահել 50 մահճակալ...

1. ԲԱՆՎՈՐ. Գեղեցիկ բան է ունենալ սանատո-
րիա, բայց հարց է, մեզ, բանվորներին քանի մահճա-
կալ կը հատկացնեն...

II. ԲԱՆՎՈՐ. Այդ կախված է նրանց մեծահոգու-
թիւնից ե վողորմածութիւնից...

I. ԲԱՆՎՈՐ. Մեզ հարկավոր չեն վոչ նրանց մե-
ծահոգութիւնը ե վոչ ել նրանց վողորմածութիւնը...
(Խփում է մուրճը):

(Բանվորները վերջացնում են իրանց զործը,
ցրվում են զանազան կողմեր յեվ ուրիշ նոր յեկող
քանվորների հետ առանձին, առանձին փողերիկ խում-
բակներ են կազմում հրապարակի զանազան տեղե-

րում. գալիս են խումբ-խումբ հարուստ դասակարգի որիորդներ, տիկիկներ, յերիտասարդներ՝ շքեղ հագնված, սպիտակ ծաղիկներով զարդարված. բերում են կնքված տուփեր, ծաղիկներ, փնջեր, սեղանի վրա փռում են սպիտակ սփռոց. սեղանը, ամբիոնը զարդարում, զեղեցկացնում են):

(Ձախակողմյան փողոցից յերեվում ե Արտավազը բանվորներով շրջապատված):

I. ԲԱՆՎՈՐ. Տեսեք, նայեցեք սրանց, ինչով են զբաղված, հա, հա, հա...

II. ԲԱՆՎՈՐ. Ինչպիսի յեռանդով զարդարում են սեղանը...

III. ԲԱՆՎՈՐ. Կան միամիտներ, վորոնք կարծում են թե մեծ գործ են կատարում...

I. ԲԱՆՎՈՐ. Այդպիսի միամիտներին մենք այսօր խելքի կը բերենք...

ԱՐՏԱՎԱԶԻ. Բոլոր թաղերում սպասում են նշանին, վոստիկանությունը վոչինչ չգիտե. դեհ տղերք ցրվեցեք ձեր տեղերը, հետեցեք, յեղեք զգուշ, սկսել միաժամանակ և միաժամանակ դիմել դեպի հրապարակ... (ցրվում են):

* *

I. ՈՐԻՈՐԴ. (Դահլիճում՝ դեռ բեմ՝ չքարձրացած). Ահա նա արդեն այստեղ ե...

II. ՈՐԻՈՐԴ. Անցյալ օրը յեկել եր իր ջութակով... Յես նվագում եի դաշնամուրի վրա, իսկ նա ջութակի վրա... (անցնում են բեմ):

I. ՈՐԻՈՐԴ. Յեթե նա նվագեր պատուհանիդ տակ...

II. ՈՐԻՈՐԴ. Ինչո՞ւ պետք ե նվագի պատուհանի տակ...

I. ՈՐԻՈՐԴ. Անկասկած, նա արդեն իրավունք ե ստացել նվագելու սենյակում...

II. ՈՐԻՈՐԴ. Յեթե շատ ես նախանձում, յես կասեմ նրան, վոր զա և պատուհանիդ տակ նվագի...

I. ՈՐԻՈՐԴ. Դու ծաղրում ես, բայց յես դեպի նրան անտարբեր չեմ...

II. ՈՐԻՈՐԴ. Շրթունքներդ դողում են...

I. ՈՐԻՈՐԴ. Առավոտները յերբ զարթնում եմ, նայում եմ շուրջս և տեսնում եմ վոչ վոր չկա, սարսափում եմ...

II. ՈՐԻՈՐԴ. Յես մի առ մի կը պատմեմ նրան...

I. ՈՐԻՈՐԴ. Դու նրան այնպես հիպնոսես, կաշկանդես ես...

* * *

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. (Բեմի խորքից մի տիկնոջ հետ). Մարդիկ շատ բան կարող են ասել...

ՏԻԿԻՆ. Ձարմանալի տարրերնակ աղջիկ ե, ինքն բնդունակություն չունի ապրելու, գուրկ ե զգացմունքներից, կատարյալ փայտի կտոր և անպատճառ ուղում ե վոր ամենքը լինեն իրա նման...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Նա վոր սկսում ե խոսել... Հա, հա, հա...

ՏԻԿԻՆ. Նրա խոսելը ինձ համար վոչ մի արժեք չունի, սակայն լինում են ըոպեններ... Ընկնում եմ հուսա-հատության մեջ...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Ինչո՞ւ...

ՏԻԿԻՆ. Յես վախենում եմ քեզանից... Յեթե հան-

կարծ մի գեղեցիկ որ դու ասես, որ այլևս չես սիրում ինձ, ինչ է լինելու իմ դրությունը...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Իսկ ի՞նչու պետքե այդպես լինի...

ՏԻԿԻՆ. Անցյալ զիշեր սպասում եի անհամբեր, սեղանը պատրաստել եի, սեղանի վրա ամեն ինչ կար, ուտելիք, խմելիք... Դու յեկար, միտսին նստեցինք, բայց սովորությանդ հակառակ վոչ բան կերար, վոչ խմեցիր...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Այո... Տրամադրությունս փոխվեց...

ՏԻԿԻՆ. Յես ուզումեմ տեսնել քեզ միշտ ուրախ, միշտ զվարթ... Դու ինձ համար կյանքի անսպառ աղբյուր պետք է լինես...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Հանկարծ հիշեցի ամուսնուդ...

ՏԻԿԻՆ. Յես ասում եմ քեզ, վոր նա գնացել է վեց ամսով և դու կարող ես բոլորովին հանգիստ լինել...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Իսկ յեթե հանկարծ վերադառնա անսպասելի կերպով...

ՏԻԿԻՆ. Ախ դու վախկոտ, հա, հա, հա...

*
*
*

(Հրապարակի խորքում յերեվում են Աննան, Հեղինեն յեվ Նունեն):

ԱՆՆԱ. Հեղինե, դու վերջին ժամանակներս հեռու—հեռու ես ման գալի... Սուսափում ես մեղանից... Յեթե այսօրվա տոնը չը լիներ, յերեի չեինք պատահի... Ասում են բանվորների համար սկսել ես դասախոսություններ կարդալ...

ՆՈՒՆԵ. Հեղինեն այժմ բանվորների ամենամոտ ըն-

կերն ե, նստում ե հետները ժամերով խոսում, վիճում...

ԱՆՆԱ. Յերանի ի՞նչի մասին ես խոսում տղետ բանվորների հետ...

ՀԵՂԻՆԵ. Սոսում եմ նրանց անտեսական, իրավական դրության մասին, խոսում եմ ինչպես նրանք արյուն բրախք են թափում, բայց միշտ տկուր են ու քաղցած...

ԱՆՆԱ. Բանվորները համար ի՞նչ արժեք ունին քո դատարկ խոսքերը... Յեթե դու հարուստ լինեիր և կարողանայիր ոգնել...

ՀԵՂԻՆԵ. Պետք է կազմակերպել և միացյալ ույթերով դուրս գալ շահագործողների դեմ, տապալել նրանց, գործարանները խլել...

ԱՆՆԱ. Խեղճ բանվորներին կերակրումես այդպիսի ցնդաբանություններով, հա, հա, հա...

ՆՈՒՆԵ. Դու յեթե ծանոթ լինեիր բանվորների հետ այդպես չեիր խոսի...

ԱՆՆԱ. Ուրեմն դու ել Հեղինեի նման ես մտածում...

ՆՈՒՆԵ. Յես ուրիշ կերպ չեմ կարող մտածել...

ԱՆՆԱ. Յես միայն կարող եմ ծիծաղել... Սպասեցեք ձեր այդ յերանիլի ժամանակին, հա, հա, հա... (մոտենում են սեղանին):

(Հրապարակի վրա տիրում ե կենդանություն յեվ ժխոր, զանազան կողմերից յերեվում են ծաղիկ ծախող խմբեր, վորոնք յերեմն յերեմն մոտենում են սեղանին, վերջում սպիտակ ծաղիկներ ու կրկին ցրվում զանազան կողմեր, թե բնի վրա յեվ թե դահլիճ. 2-րդ գործողության աշակերտուհիները բոլորն ել մասնակցում են՝ ցրված զանազան խմբակներում. բնի առաջակողմը աչքի են ընկնում բանվորների յերեխաներ՝ ցնցոտիներով ծածկված,

շատերն ել կխամերկ յեւ ըորիկ, զարմանքով դիտում են շքեղ հագնված տիկիներին յեւ որիորդներին. լսվում է յերաժշտութիւն, զանազան տեղերում կանգնած են բանվորների խմբեր ու զբաղված են խոսակցութիւնով:

I. ԲԱՆՎՈՐ. (Հանդիսականների մեջ, առաջին շարքերում). Սրանք են, վոր մեզ համար մտածում են... Մենք ծածկված ենք ցնցոտիներով, քաշենք տալի մեր վոլորմելի գոյութիւնը... Վոչ միայն մեր աշխատանքը, այլև մեր կանայքը, մեր աղջկերքը սրանցն են պատկանում... Նայեցեք, տեսեք ինչպիսի են հագնված, ինչպիսի են զարդարված, ինչպիսի կայտառ են սրանց գեւքերը... Յեկել են մեր թաղը սպիտակ ծաղիկ տոնն են կազմակերպում...

II. ԲԱՆՎՈՐ. Մեր յերեխաները ինչպիսի ցնցոտիներով են ծածկված...

I. ԲԱՆՎՈՐ. Քանի քանի մեկ նմանները սրանց յերեսից գնացել են մյուս աշխարհ...

III. ԲԱՆՎՈՐ. Կյանքը այդպիսի է... (անցնում են ընդ):

I. ԲԱՆՎՈՐ. Այժմ հերթը մեզ է հասել և մենք կողարկենք մյուս աշխարհ վոչ թե մեկ մեկ այլ ամենքին միասին...

ԱՇԽԵՆ. (Շտապ մոտենում է). Դու այստեղ ես, յես քեզ փնտրում եի... Արտավազըն ուղղում է քեզ տեսնել...

I. ԲԱՆՎՈՐ. Ձե վոր քեզ նախազգուշացրել եի... Գիտես վոր այսօր մենք... Միթե գետն ընկնելուց հետո, անձրեկից կարելի է վախենալ... Արտավազը վերջապես պետք է գիտենա, վոր կարող է պատահել մի

գեղեցիկ ու յես այլիս չը լինեմ... Հա ինչպիսի ե գրութիւնը...

ԱՇԽԵՆ. Սպասում են ընդհանուր նշանին... (Մոտենում են ծաղիկ ծախողները):

ՈՐԻՈՐԴ. Ձեզանց ծաղիկ վոչ վոք չե ցանկանում...

I. ԲԱՆՎՈՐ. Ահա Աշխենը չունի, կպցրեք սրա կրծքին... (Որիորդը կպցնում է). Տեսնում ես Աշխեն, վորքան բարի են, քեզ ուղղում են գեղեցկացնել. զարդարել... (Դառնում է որիորդներին). ճիշտն ասած յես այսօր տրամադրութիւն չունիի այս կողմն անցնելու, բայց մտածեցի զալ և նայել թե ինչպիսի անելու և ինչպիսի ասելու մեղ բանվորներին...

ՈՐԻՈՐԴ. (Վախեցած դառնում է ընկերուհուն) Հեռանանք այստեղից...

I. ԲԱՆՎՈՐ. Ինչո՞ւ այդպիսի վախեցաք և ինչո՞ւ եք ուղղում հեռանալ. ասեցեք խնդրեմ այդ թանգազին վուկի շղթան, վոր կախել եք ձեզ ե պատկանում...

ՈՐԻՈՐԴ. Ի հարկե ինձ ե պատկանում... Նվիրել ե հայրիկս...

I. ԲԱՆՎՈՐ. Ձարդարել, գեղեցկացրել եք ձեր կուրծքը, այսօր սպիտակ ծաղիկ տոնն ե, հա, հա, հա... (Անցնում են):

ՈՐԻՈՐԴ. Այ քեզ տարորինակ մարդ... (Բեմի խորքում յերեւում են որիորդներ, տիկիներ, յերիտասարդներ յեւ Աշտը: Խոսելով, ծիծաղելով զալիս են առաջ):

ՆՈՒՆԵ. (Վոր կանգնած է սեղանի մոտ՝ դառնում է Աշտին). Դուք շարունակ այդպիսի պետք ե լինեք և հանաքներ անեք...

ԱՇՈՏ. Կյանքը յերազ է, ինչ կարող ենք անել յեթե վոչ հանաքներ...

ՆՈՒՆԵ. Այսոր դուք բացառություն եք կազմում...

Ձեր կուրծքը զարդարել եք կարմիր վարդով...

ՈՐԻՈՐԴ. Վորպես ընկերության նախագահ՝ իրավունք ունի...

ՆՈՒՆԵ. Գեղեցիկ վարդ է, յեթե յես լինեի չեի պոկի թփից...

ԱՇՈՏ. Միթե միևնույն չես, պետք է թառամի թփի վրա...

ՆՈՒՆԵ. Բայց յերբ նա պոկվում է մի անարժան մարդու ձեռքով... Յես ափսոսում եմ...

Ի. ՈՐԻՈՐԴ. Այիսոսում եք... Հա, հա, հա...

ԱՇՈՏ. Նայած թվ ինչպես ես մտածում, վերցրեք հենց կյանքը... Մեկին պատահում ես, կարծում ես թե ահա այն ինչվոր փնտրում եիր գտել ես, սակայն տեսնում ես վոր չէ... Յեվ լավ է վոր այդպես է, ապա թե վոչ այն ժամանակ կյանքը իր արժեքը, իր հրապույրը կը կորցնեիր... (Դիմացից զալիս են որիորդներ, վորոնց մեջ մեկը զարդարված է սպիտակ ծաղկե շարաններով յեվ աչքի է ընկնում իր գեղեցկությամբ ու շքեղ հագուստով. Աշտը դիմավորում է):

ԱՇՈՏ. Բարե ձեզ, բարե, վերջապես յերևացիք... Ինչպես գեղեցիկ եք զարդարվել, թվ չի առնի ձեզանից ծաղիկ... Յեթե միք աշխատակիցները լինեին ձեզ նման մեր բոլոր տուփերը կը լցվեին փողերով. յես այսոր ուղարկեցի ձեզ ծաղիկներ ի փունջ...

ՈՐԻՈՐԴ. Շնորհակալ եմ... Ձեր ուղարկած փունջը առանձնասենյակումս դրի, կարող եք այսոր յերեկոյան գալ և տեսնել...

ԱՇՈՏ. Շատ ուրախ եմ, անպատճառ կը գամ...

ՈՐԻՈՐԴ. Յես դրի առանձնասենյակումս .. Վոչ վոր չի մոտենա...

ԱՇՈՏ. Բայց կա մեկը, կը մոտենա և դուք չեք կարող նրան հրամայել, յեթե հրամայեք միևնույն է, նա ձեզ չի հպատակվի...

ՈՐԻՈՐԴ. Ինչպես...

ԱՇՈՏ. Ժամանակը վոչ վորին չի հպատակվում...

ՈՐԻՈՐԴ. Ժամանակ... Հա, հա, հա... Ժամանակի ընթացքում վոչ միայն ծաղիկները, այլև մենք ինքներս դառնում ենք փոշի, հա, հա, հա...

ԱՇՈՏ. Վորքան ուրախ եմ, վոր ծիծաղում եք այդպես անհոգ...

ՈՐԻՈՐԴ. Խնդրեմ ասեք, դասախոսությունը շուտով սկսելու յենք թե՞ վոչ...

ԱՇՈՏ. Դեռ փոքր ինչ վաղ է... Դասախոսությունից հետո ամենքը կը ցրվեն և այլևս փող չի հավաքվի...

ՈՐԻՈՐԴ. Ունի ից փող հավաքեմ, այստեղ ապրում են միայն քաղցած մարդիկ...

ՆՈՒՆԵ. Բանվորական թաղ է...

ՈՐԻՈՐԴ. Մեզ վրա գայլերի նման են նայում... Ճանապարհին մի բանվորի պատահեցի, վրան հագուստ չկար, վոտին կոշիկ... Աղքատություն... Թշվառություն...

ԱՇՈՏ. Բանվորը միշտ էլ տկուր է, միշտ էլ քաղցած, այդ նրանց վիճակն է և կյանքի որենք...

ՆՈՒՆԵ. Յեվ այդ որենքը գրում եք դուք...

ԱՇՈՏ. Բանվորները պետք է աշխատեն, քրտինք թափեն...

ՆՈՒՆԵ. Իսկ ձեզ նմանները ուտեն և վայելեն...
ՈՐԻՈՐԴ. Հեղինեն յերանի ի՞նչ է գտել այս բան-
վորների մեջ...

ԱՇՈՏ. Նա, նրա հետ միասին և Արտավազը
կազմակերպում են բանվորներին... Հա, հա, հա...

ՈՐԻՈՐԴ. Ինչպես թե կազմակերպում...

ԱՇՈՏ. Վորպեսզի կուռ շարքերով դուրս գան և
տապալեն մեզ հարուստներին, հա, հա, հա...

ՈՐԻՈՐԴ. Յես զարմանում եմ, վոր Հեղինեն տար-
վել է այդպիսի ցնորքներով...

ԱՇՈՏ. Նա առհասարակ խուսափում է մեղանից...

ՆՈՒՆԵ. (Դառնում է առանձնապես Աշոտին,
մյուսները ցրվում են). Հեղինեն ունի լուրջ պատճառ
խուսափելու ձեզանից... Լավ գիտեք թե ինչո՞ւ... Դուք
հանդգնություն ունիք...

ԱՇՈՏ. Ինչպես յերևում է այսօր տնից դուրս գա-
լու ժամանակ վորոշում եք կայացրել կովի ինձ հետ...
Սակայն յես կովից չեմ վախենում... (Անցնում, մոտե-
նում է գեղեցիկ որիորդին):

* * *

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. (Ժաղիկներ ծախող աղջիկներով
շրջապատված, մեկի ծեռքից վերցնում է փողերի
տուփը, թափ է տալի). Հետաքրքիր է վորքան կը լի-
նեք հավաքած... Համարյա թե լիքն է... Աշոտը յերբ
ինձ հրավիրեց, յես ասացի, վոր կարող եմ մասնակցել
միայն այն դեպքում՝ յեթե իմ խմբակի ցուցակը յես
ինքս կազմեմ և ինքս հրավիրեմ... Ինձ թվում է, վոր
դուք դժգոհ չեք...

I. ՈՐԻՈՐԴ. Մենք շատ ուրախ ենք...

II. ՈՐԻՈՐԴ. Մեր տրամադրությունը շատ լավ է...
ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Դուք ամենքդ այսօր իմ հյուրերն
եք... Տուփերը հանձնելուն պես ուղղակի կը գնանք
միասին մեզ մոտ...

I. ՈՐԻՈՐԴ. Իսկ ի՞նչ եք պատրաստել...

II. ՈՐԻՈՐԴ. Գիտե՞ք ինչպես ենք քաղցած...

III. Առավոտից մինչև այժմ միայն յերկու բաժակ
թեյ ենք խմել...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Յերկու որ առաջ պատվիրել եմ
ծառային... Սեղանիս վրա կը գտնեք ամեն ինչ...

I. ՈՐԻՈՐԴ. Ուրեմն և ամենաթանգագին խմիչք-
ներ...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Անկասկած, մի՞թե առանց խմիչք-
ների կարելի չէ սեղան բանալ...

II. ՈՐԻՈՐԴ. Մենք ձեր սեղանը այնպես մաքրենք,
վոր ինքներդ զարմանաք...

III. ՈՐԻՈՐԴ. Իսկ յերաժշտություն մասին մտա-
ծե՞լ եք...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Յես ասել եմ որիորդ Աստղիկին,
հավատացած եմ, վոր նա իր ջութակով կը լինի մեզ
մոտ...

II. ՈՐԻՈՐԴ. Աստղիկը առհասարակ մերժել չը-
գիտե, նա միշտ պատրաստ է...

* I. ՈՐԻՈՐԴ. Այդ շատ լավ եք մտածել...

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ. Այսօր մենք այնպիսի ուրախ ժա-
մանակ անցկացնենք...

III. ՈՐԻՈՐԴ. Աստղիկը վոր յերգում, պարում է,
յես հիանում եմ... Յեթե տղամարդ լինեի... (անց-
նում են):

* * *

ԱՇՈՏ. (Հանում է ծոցից ժամացույցը յեվ նայում է):

ՈՐԻՈՐԴ. Շատ ենք ուշացնում մեր դասախոսությունը...

ԱՇՈՏ. Ժամանակ է սկսելու, արդեն 12-ն է...

ՈՐԻՈՐԴ. Այո, այո, սկսենք, կարգադրեցեք...

ԱՇՈՏ. (Քարծրանում է ամբիոն յեվ դառնում է ամենքին ջարձր ձայնով). Հարգելի որիորդներ, տիկիններ, յերիտասարդներ, բանվորներ, սկսում ենք դասախոսություն, ուշադրություն... Ուշադրություն... (Ամենքը հավաքվում են ամբիոնի շուրջը. որիորդը քարծրանում է ամբիոն, տիրում է լուսթյուն):

ՈՐԻՈՐԴ. Յեղբայրներ և քույրեր, այսօր սպիտակ ծաղիկ տոնն է... Զեղանից ամեն մեկը գիտե թե թուրքախոր ինչպիսի պատուհաս է մարդկություն համար... Մենք կուվում ենք թուրքախորի դեմ, աշխատում ենք դուրսբերել բարեկամի, գտնել միջոցներ, միջոցներից մեկն էլ մեր ընկերությունն է, վոր բոլոր քաղաքներում աշխատում է ունենալ ճյուղեր, բանալ հիվանդանոցներ, սանատորիաներ և ոգնություն համարել ըստ հնարավորության... Այստեղի ճյուղը, վոր կազմվել է շնորհիվ Աշոտի յեռանդուն ջանքերի և աշխատանքի՝ վորոշել է սանատորիա բանալ մոտիկ ամառանոցում և 50 մահճակալ պահել... Սանատորիա բանալու համար հարկավոր է խոշոր գումար... Մենք հույս ունենք, վոր այսօր բավականի գումար կը հավաքվի և մենք հնարավորություն կունենանք...

Ի. ԲԱՆՎՈՐ. Յեկել եք մեր թողը... Ուզում եք սանատորիա շինել... Մեզ հարկավոր է ձեր սանատո-

րիան... հարկավոր է են ձեր սպիտակ ծաղիկները, ի՞նչ կասեք տղերք...

ԱՇՈՏ. Այդ ձեր անձնական կարծիքն է... (Հնդկից լսվում է աղմուկ):

ՀԵՂԻՆԵ. Անձնական կարծիք է, այլ ամբողջ բանվորություն... Այսօր դուք զբաղվեցիք .. Մեր փողոցները զարդարեցիք սպիտակ ծաղիկներով, դրոշակներով, կանաչ ճյուղերով, ուրախացաք... Զվարճացաք մեզանով... Այժմ բավական է...

ԱՇՈՏ. Մենք յեկել ենք այստեղ բարի ցանկություններով...

ԱՇԽԵՆ. (Անցնում է առաջ). Մենք ձեզ լավ ենք ճանաչում... (Հուզված դառնում է բանվորներին). Յեթե գիտենաք թե քանիսների կյանքն է թունավորել... Յեթե մեկ-մեկ պատմեմ այն ամենը, ինչ վոր գիտեմ յես...

ԶԱՅՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ԿՈՂՄԵՐԻՑ. Մահ... Մահ այդպիսիներին...

ԱՐՏԱՎԱԶԴ. Տղերք Աշոտը մեկ է... Զբաղվել մեկնով...

ԱՇՈՏ. Խոսում եք այդպես... Ամենքդ ապրում եք մեր սեղանի փշրանքներով... Դուք քաղցածներդ և տեղերներդ...

Ի. ԲԱՆՎՈՐ. Իսկ դուք...

ԱՐՏԱՎԱԶԴ. Այս քաղցածները և տեղերները քեզ նման պարազիտներին կը վոչնչացնեն...

ԱՇՈՏ. Վոճրագործ... Դու մոլորեցնում ես բանվորներին...

ԱՐՏԱՎԱԶԴ. Այո, քեզ նմանների համար յես մահ եմ բերում... (Բեմի խորքից շնչասպառ ներս է վազում՝ ծաղիկներով զարդարված աղջիկ):

Աղքիկ. Շուտով, շուտով փախեք... (Հեռվում աղ-
մուկի ձայները ուժեղանում են). Բանվորները դուրս
են յեկեկ կարմիր գորշալիներով, բոլոր տեղերից մեզ
քշում են, պոկում են մեր ծաղիկները, շուտ են տալի
սեղանները... Մերոնցից շատերը ուշաթափ ընկնում են
փողոցներում... Վոստիկանները փախել են .. (Ընկնում
ե իրարանցում):

ԱՇՈՏ. Ապա զո՞րքը...

Աղքիկ. Վոչ վոք չկա... Սոսկալի բան ե կատար-
վում... Պետք ե փախչել, փախչել այստեղից... Ահա տեսեք
ինչպես են փախչում... (Փողոցի խորքում յերեվում են
փախչող խմբեր):

ԶԱՅՆԵՐ. Փախչենք... փախչենք...

- » Ո՞ւր փախչենք...
- » Մենք գտնվում ենք բանվորների թաղում...
- » Կտրված ենք մերոնցից...
- » Մենք շրջապատված ենք...

Ի. ԲԱՆՎՈՐ. Դուք գեղեցիկ տիկիներն ե ուրիշու-
ներ, նայեցեք վերև, մեր գործարանները մուր են ժայթ-
քում, ձեր շորերը, ծաղիկները ե այս սպիտակ սիւնոցը
կարող են մրտավել... (Քաշում ե սիւնոցը, ծաղիկներն
ու տուփերը թափվում են ներքեվ). ավելի լավ ե վերց-
նեք (սիւնոցը տալիս ե ուրիշուներին մեկին). ե հե-
ռանաք այստեղից...

ԱՇՈՏ. Սրանց պետք ե կոտորել... Կոտորել...
Սրանք կատաղած շներ են...

ԱՐՏԱՎԱԶԴ. (Բռնում ե Աշոտի ոձիքից). Կա-
տաղած շները կարող են քեզ կծել... Բո կյանքը այժմ
մեր ձեռքին ե... Բեզ նմանների հետ հաշիվը շուտով

կը տեսնենք... (Արհամարանքով թողնում ե ոձիքը).
Հեռացիր այստեղից... Ասում եմ քեզ հեռացիր...

(Հեռվից լսվում ե փողերի ձայն):

ԱՐՏԱՎԱԶԴ. Տղերք ժամանակ ե, գնանք հրապա-
րակ...

ԶԱՅՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ԿՈՂՄԵՐԻՑ. Հրապարակ ..
Հրապարակ... Դեպի հրապարակ... (Չեղքերը քարծ-
րացրած, աղմուկով դիմում են դեպի խորքը):

ԱՇՈՏ. (Արտավազի հետեվից). Մեզ... Մեզ տա-
պալել... Վոչնչացնել... Այդ քեզ չի հաջողվի... (գրպա-
նից հանում ե ստրճանակ):

Ի. ԲԱՆՎՈՐ. Սխալվում ես... (Երևում ե բռնուցքն
Աշոտը ստրճանակը ձեռքին՝ կիսամեծ փովում ե
հատակին):

ՎԱՐԱԳՈՒՅՐ



ԳԻՆՆ Ե 40 ԿՈՊ.

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

- | | |
|---|------|
| 1. «Մուխ կամարների տակ» զրամ, հայուդ 1 գործ. | 6 կ |
| 2. «Մարգարիտներ» զրամա հայուդ 1 գործ. 2 պատկ. | 10 կ |
| 3. «Կապիտալի ստրուկներ» զրամա 3 գործ. | 40 կ |

Դիմել՝ Թիֆլիս Հայպետհրատ, Գուտտեմբերգ գրախանութ
ներին կամ հեղինակին՝ Норащенский пер. № 11.

«Ազգային գրադարան



NL0321543

19523